

NAVASART

ORGANO DE LA U. G. ARMENIA DE CULTURA FISICA



ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ Հ. Մ. Ը. Մ.-Ի

ՆՈՅԵՄԲԵՐ 1957

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատմական նշմարտութիւն մը		1
Հանչանք մարգական Հայաստանը		5
"Նաւասարդ"ի տարեկան հանդէսը		6
Աօրեայ մարզամիճ կարեւորութիւնը	Շ. ՔՐԻՍԵԱՆ	8
"Կովտաս" երգչախումբի հանդէսը	Հ. ՍՏԵՓԱՆԵԱՆ	11
Հայ մարզիկները երկրէ երկիր	ՄԱՐԶԱՍԷՐ	12
Սկսուտութիւնը	Մ. ԵԱՆՇՔԵԱՆ	14
Պոլիվիա	Մ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ	19
Հ. Մ. Ը. Մ. Ի լողաբշտները		24
Cultura y Educación Física	EDITORIAL	25
Fueron los armenios quienes crearon el scoutismo		26
Estudios sobre Armenia	R. MIRAKIAN	27
Un deportista debe estar orgulloso	G. SHAHINIAN	29
Exitoso fin del trono de tenis		30
Exitoso festejo de los juegos deportivos Navasartian		32
El miedo al cancer		33
Finalizó la semana del scout		35
La resignación: Una virtud inapreciable		37
Las cualidades Somaticas del atleta		38



ՊԱՏՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Թ. Խ — Հայկական Ուսումնասիրութեանց հիմնարկութիւնը իր առաջին գրքայինով կուգայ պարզելու "պատմական ճշմարտութիւն մը" որ անտեղի կերպով վէճի առարկան է տասնեակ տարիներէ ի վեր:

Այս ուսումնասիրութիւնը քաղաքացիական դատարարական յարգով փորձ մը քլլալով, զայն կը ներկայացնենք մեր ընթերցողներուն նայնութեամբ:

Նոյեմբեր 29ը թուական մըն է, որ վէճի առարկայ է Հայ իրականութեան մէջ: Հայ պօլշեւիքները եւ անոնց համակիրները այդ թուականը կը յայտարարեն իրրու Հայաստանի ազատագրութեան օր, ուրիշներ կը պնդեն ընդհակառակը թէ այդ թուականը Հայաստանի անկախ, ռամկավար Հանրապետութեան կործանման եւ Հայ ազատասէր ժողովուրդի սարկացման օրն է:

Մենք, նախանձախնդիր պատմական ճշմարտութեան, մեր այս գրքոյնով նպատակ ունինք պարզել ճշմարտութիւնը. բոլորովին առարկայական կերպով, գոյութիւն ունեցող շօշափելի փաստերու լրային տակ:

Առաջին աշխարհամարտէն յետոյ, 1918 Մայիս 28ին, Հայ ժողովուրդը յուսահատ եւ վճռական ճակատամարտով մը, Սարտարապատի, Ղարաբաղի սայի եւ Գաղ-Ալարանի մէջ, վերջնականապէս ջախջախելով թրքական ուժերը, յայտարարեց Հայաստանի Անկախութիւնը, որ ամենէն առաջ ճանչցուեցաւ Թուրքիոյ կողմէ:

Դաշնակիցներու Գերագոյն Խորհուրդը, 1920 Յունուար 19ին, ճանչցաւ Հայաստանի կտուածարութեան (տէ ֆակտո) գոյութիւնը:

Օգոստոս 10ին սարագրուեցաւ Սէվրի դաշնագիրը, որով Հայաստանը կը ճանչցուէր անկախ ռամկավար Հանրապետութիւն եւ որուն պիտի միացուէին Թրքահայաստանի հողերը, Վանի, Պիթլիսի, Կարնոյ եւ Տրապիզոնի վիլայէթներէն (նահանգ): Սահմաններու դժուար յանձնուեցաւ Միացեալ Նահանգներու նախագահ Ուիլսոնին, որ կատարեց իր այդ պարտականութիւնը:

Հայաստանի Հանրապետութիւնը ճանչցող առաջին պետութիւններէն մին

եղաւ նաև Արժանիքին՝ նոխազան Ինիւլիթօ Իրիկօժէնի օրով :

Համաշխարհային առողջին պատերազմին Հայաստանի հողերուն տիրապետող երկու պետութիւններէն Թուրքիա պարտուած էր, իսկ Ռուսաստան ներքին յեղափոխութեան հետեանրով, կուրի ճակատը լքած էր :

Թուրքիոյ իշխանութեանէն ազատուած էին Սիւրիան, Լիբանանը, Քիւրտքը, Յորդանանը, Իսրայէլը, Արարիան, Եէմէնը, որոնք փաստօրէն դրաւուած էին դաշնակից բանակներու կողմէ, որոնք քաջուեցան այն ատեն՝ երբ այդ նորագոյտ ժողովուրդները կազմակերպուեցան եւ ինքնապաշտպանութեան ընդունակ դարձան :

Թրքահայաստանն ալ Սէվրի դաշնագրով իրաւապէս ազատագրուած էր եւ միացուած Կովկասեան Հայաստանին, բայց այդ հողերը դաշնակիցներէն դրաւուած չէին :

Այդ դերը կ'իյնար Ռուսիոյ, բայց ան ներքին կռիւններու անձնատուր, ի վերջոյ պօլշեւիկացած, ոչ միայն չիրաւեց Թրքահայ հողերը ժամանակաւորապէս, այլ միացաւ իր երէկի դարաւոր թշնամիին՝ Թուրքին, պաշարելու համար իր դաշնակիցներուն դէմ :

Պօլշեւիկները եւ Քեմալական Թուրքիան ամէն ինչ ըրին, հնարաւորուելու համար իրենց երբեմնի հողամասերուն վրայ : Պօլշեւիկները՝ Հայաստանի շահերուն առաջին անգամ դաւաճանեցին, երբ 1920 Մարտ 3ին ստորագրեցին Պրէսթ-Լիթովսքի դաշնագիրը, որով անոնք ո'չ միայն Թրքահայաստանի հողերու գրաւման մասին չէին մտածեր, այլ կուգային Կովկասեան Հայաստանի հողերն ալ, Կարսի ու Արտահանի նահանգները զիջելու Թուրքերուն :

Հայաստանի Անկախ, ռաժկավար Հանրապետութեան ստեղծումէն վերջն ալ, Քեմալական Թուրքերն ու պօլշեւիկները շարունակեցին դաւել Հայաստանի դէմ, որուն ոչնչով չէին օգներ դաշնակից ուժերն ալ, որ Սէվրի դաշնագիրը ստորագրած էին :

Պօլշեւիկներու ձգտումն էր վերագրաւել Անդրկովկասը, ուր ստեղծուած էին երեք անկախ Հանրապետութիւններ, Հայաստան, Վրաստան եւ Ադրպէյճան :

Պօլշեւիկները այս երեք հանրապետութիւններուն հետ ալ բանակցութիւններ վարեցին, ճանչնալու համար անոնց անկախութիւնը, բայց այդ բանակցութիւնները նպատակ ունէին քնայնելու նորագոյտ ժողովուրդները եւ ժամանակ շահելու, որպէսզի Թուրքիոյ հետ վերջնականապէս համկացողութեան դային :

Եւ այդ հատկացողութիւնը կատարուեցաւ Մոսկուայի մէջ, ուր պօլշեւիկները համաձայնեցան Քեմալական Թուրքիոյ հետ, Պրէսթ-Լիթովսքի դաշնագրի հիման վրայ :

Ապահոված ըլլալով պօլշեւիկներու օժանդակութիւնը եւ համաձայնած ըլլալով հողային եւ այլ հարցերու շուրջ, Թուրք բանակը, առանց պատերազմ յայտարարելու, յարձակեցաւ Հայաստանի վրայ, 1920 Սեպտ. 23ին :

Հայաստանի կառավարութեան կողմէ իբրև քանազնաց Մոսկուա դիւանօղ Լեւոն Ծանթ, վերադարձած էր Երեւան, Սեպտ. 14ին, որովհետև ուսները առաջարկած էին բանակցութիւնները շարունակել Երեւանի մէջ :

Թուրք եւ հայ պատերազմը սկսած էր, երբ 18 Հոկտեմբերին Երեւան հասաւ Սորհրդային պատուիրակ Լըկրանը, իբր թէ բանակցութիւնները շարունակելու, բայց իրականին մէջ միայն դաւելու համար Հայաստանի դէմ :

Թուրք եւ պօլշեւիկ համաձայնութեան հիման վրայ, դեռ 1920 Ապրիլ 28-

ին, ուստի թուրքերու աջակցութեամբ, գրաւեցին Ազրպէյճանը յայտարարելով Պորհրդային Հանրապետութիւն:

Նոյն օրն իսկ, Ազրպէյճանի արտաքին գործավարը վերջնազէր տուաւ Հայաստանի կառավարութեան, պահանջելով Ղարաբաղի եւ Զանգեզուրի պարպումը՝ եւ յանձնումը Ազրպէյճանին: Այդ օրէն պօլշեվիէ գործերու յարձակումները անպակաս եղան, գրադեցնելով հայ զօրքը այդ ճակատին վրայ:

Երբ 1920 Սեպտ. 23ին, թուրք բանակը յարձակեցաւ Հայաստանի վրայ, պօլշեվիէները զօրք կեդրոնացուցին Հայաստանի հիւսիսային սահմաններուն վրայ եւ մտան Ղազախի դաւառը՝ Նոյեմբեր 29ին:

Հայաստան արեւմուտէն երբ կը կռուէր թուրք դերզանց ուժերու դէմ, ի վիճակի չէր միաժամանակ կռուելու հիւսիսէն եւ հարաւ արեւելէն յարձակող պօլշեվիէ ուժերուն դէմ, որով Հայաստան ստիպուեցաւ հաշտութիւն կնքել թուրքերու հետ, իսկ ուստի 1920 Դեկտ. 2ին մտան Երևան, խորտակելով հայ ժողովուրդի անկախ եւ ազատ ապրելու դարաւոր երազը:

Ինչպէս կը տեսնենք, Նոյեմբեր 29ը եղաւ Հայաստանի անկախութեան վախճանը:

Ան՝ Հայաստանի խորհրդայնացումին եւ հայ ժողովուրդի պօլշեվիէեան լուծը ազամայ ընդունելու թուականն է:

Այս ողբերգական դէպքերու հետեւանքով, ոչ միայն չազատագրուեցան թրքահայաստանի հողերը, այլ անկախ Հայաստանի շուրջ 60.000 քառ. քիլոմետր հողամասն կհասուցաւ 30.000 քառակուսի քիլոմետրի, Պորհրդային Հայաստան անուան տակ: Կարքը, Արտահանը ու Սուււալուն արուեցան թուրքերուն:

Այս կերպով պօլշեվիէները կը յուսային սիրաշահիլ թուրքերը, ու անոնց հետ կնքեցին «յաւիտեանական եղբայրութեան դաշինք», անգլիական աշխարհակալութեան դէմ մղած իրենց պայքարի ընթացքին մասմետական աշխարհը իրենց հետ ունենալու նպատակով:

Մարդիկ կան, որոնք միամտութիւնը ունին պօլշեվիէները նկատելու իբրև Հայաստանի փրկիչ ու հայ ժողովուրդի բարեկամ եւ որոշ յոյսեր կը կապեն անոնց:

Իրականութիւնը այն է, որ պօլշեվիէները սկիզբէն եւ եթ, երբեք նկատի չունեցան հայ ժողովուրդի շահերը, այլ պատրաստ էին զսհելու հայն ու Հայաստանը համաշխարհային յեղափոխութեան յաղթանակին, որ կը ճանդիտանար իրենց նպատակակէտը:

Տանք քանի մը անհերքիչ փաստեր այս ուղղութեամբ:

Համաշխարհային առաջին պատերազմին, երբ թուրքիան պարտուած էր. երբ ուսական զօրքը դրուած էր թրքահայաստանի հողերը, երբ դեռ հայ բանակ մը չիկար որ տէր կանպէտ այդ հողերուն, Լեհիւնը, քննադատելով Ֆերէնբէրի կառավարութիւնը կը յայտարարէր. «... Մենք անջատուելու իրաւունքը պէտք է գործադրենք ամբողջ Հայաստանի վերաբերմամբ, պարտաւոր ենք ուս գործերը հետացնել Հայաստանէն եւ մեր կողմէ գրաւուած քրքակամ հողերէն»:

Այս ուրիշ բան չէր նշանակեր, եթէ ոչ դրաւուած հայկական հողերը յանձնել թուրքերուն:

Պօլշեվիէ պատմաբան Բ. Բորեանը կը գրէ - «Լեհիսի համար Հայկական Հարցը միշտ էր եւ ոչ նպատակ: Հայաստանը Լեհիսի համար գէնք էր, լուծելու համար դիւսմագիտակամ կնքուներն ու խաղերը»:

Ճարդուած էր թրքահայաստանի երկու միլիոն հայութիւնը: Մէկ մի-

լինն հայ կ'ապրէր բուսական Հայաստանի մէջ, եւ Լենին, առանց խղճահատ
բելու կը յայտարարէր .

«Համաշխարհային յեղափոխութիւնը գոհեր կը պահանջէ: Կը ցաւիմ եթէ
սէկ միլիոն հայեր պ գոհուին»:

1921 Մարտ 16ին, Մոսկուայի մէջ կը կնքուի ռուս եւ թուրք դաշինք,
որով Կարսի, Արտասհանի եւ Սուրմալուի շրջանները անգամ մը եւս կը զիջ-
ուին թուրքերոյ: Իսկ այդ դաշինքէն 12 օր առաջ «Հայասէր» Սթալինը «Ազ-
գութեան կեանքը» թերթին մէջ կը գրէր՝ «Ստորիդային Ռուսիա իրաւունք
ունի պնդելու, որ Հայաստանի համար անընդունելի պայման մը չնկատուի
կարսն ու Արտասհանը անժամայէս թողուլ թուրքին»:

Բայց Սթալին այդպէս չէր մտածեր վրացական Հողմաս եղող Պաթու-
մի մասին, որ Պրէսթ-Լիթովսքի դաշինքով զիջուած էր թուրքերոյ:

Սթալինները փրկեցին Պաթումը, փոխարէն թուրքերուն տալով Հայաս-
տանի Մուրմալու դաւանը, աւելի քան երկու հազար քառահուսի քիւմուքը
հող, որ Պրէսթ-Լիթովսքի դաշինքով կը մնար Հայաստանի:

Պօլշեփքները նոյն ձեւով վարուեցան նաեւ Ղարաբաղի եւ Նախիջևանի
խնդիրներուն մէջ, կտրելով գանձնք Հայաստանի մարմնէն ու տալով Ազրբ-
պէյճանին, իսկ Ախալքալաքն ու Պորջալուն՝ Վրաստանին:

Պօլշեփքը կառավարութիւնը ոչ մէկ բանի առջեւ կանգ չառաւ թուրքե-
րուն հաճելի ըլլալու համար: Ան, հակառակ փոքր ազգերու պաշտպանի իր
հաւաստումներուն, կործանեց Հայ ժողովուրդի անկախ եւ ազատ պետութիւ-
նը, Երբ ան իր մոխիրներէն վերածնած, նուիրուած էր խաղաղ եւ շինարար
աշխատանքի:

Անկախութեան սկիզբի տարիին իսկ քացուած էին հարիւրաւոր դպրոց-
ներ, հիմնուած էր համալսարան, երկրին տնտեսութիւնը բարձրացնելու հա-
մար մշակուած էր խոպան հողերը ոռոգելու ծրագիր, լուծած էր հողային
խնդիրը, անհող զիւղացիներուն յատկացնելով պետական հողեր, հաստատ-
ուած էր ձրի եւ պարտադիր ընդհանուր կրթութիւն:

Հայաստանը կը ծաղկէր արագօրէն, ունենալով արտասահմանի միլիոն-
նաւոր հայերու նիւթական ու բարոյական օժանդակութիւնը:

Այս բոլորը կործանեցան, երբ Նոյեմբեր 20ին պօլշեփքները գրաւեցին
Հայաստանը, ենթարկելով զայն անօրինակ բռնութեան եւ կողոպտոյի:

Հայ ազատասէր ժողովուրդը չկրցաւ հանդուրժիլ այդ բոլորին, եւ պօլ-
շեփքեան գրաւումէն երկու ամիս յետոյ ապստամբեցաւ եւ երկրէն վտարեց
կարմիր բանակները:

Վեց ամիս Հայաստան կրկին ապրեցաւ ազատ կեանքով, մինչեւ ար պօլ-
շեփքները գրաւելով Վրաստանը մեծ ուժերով խուժեցին երկիրը, երկրորդ
անգամ թաղելով փոքր ժողովուրդի մը ազատութիւնն ու անկախութիւնը:

29 Նոյեմբեր 1920ին, հազարամեայ Հայաստանը ֆիզիքապէս քերպե-
ցաւ, սակայն իր աննուած ոգին, ծարաւի՝ ազատութեան եւ անկախութեան,
չոնկրկեցաւ ինչպէս բնա չէր ընկրկած իր ամբողջ հերոսական դոյութեան
ընթացքին: Եւ այնպէս ինչպէս վեց դարերու ստրկութենէն յետոյ ան հպար-
տօրէն ոտքի կանգնեցաւ 28 Մայիս 1918ին, պիտի բարձրացնէ օր մը իր եռա-
դոյն դրօշը՝ շեփոքելով աշխարհին արդարութեան եւ ազատութեան յաղթա-
նակը:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԱՐՁԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հայաստանի քաղաքներուն ու դէղերուն մէջ կան 7 խոշոր մարդադաշտեր, 215 մարդարաններ, 2480 պատքէթպոլի ու վոլիպոլի դաշտեր եւ 450է աւելի ֆութպոլի դաշտեր:

* * *

Հայաստանի մարմնակրթական կադմակերպութեան մէջ կ'աշխատին 49% բարձրագոյն եւ 203 միջնակարգ կրթութեամբ մասնագէտներ:

* * *

1945էն ի վեր Երևանի Մարմնակրթական Հաստատութիւնը Հայաստանին տուած է աւելի քան 700 մասնագէտներ մարմնամարզի սյլ եւ այլ ճիւղերու մէջ:

* * *

Մեյպուռնի 16րդ ողիմպիական խաղերուն Հայաստանի մարդիկները իրենց շահած ոսկիէ մետալներու քանակով (4) Ս. Միութեան խառն խումբի ընդգրկած 11 հանրապետութեան մարդիկներուն մէջ զբաւած են երրորդ տեղը Ռուսիայէն եւ Ուքրանիայէն ետք:

* * *

Հայաստան այսօր ունի 117 ՀՍ. Միութեան մարմնամարզի վարչետն տիտղոսով մարդիկներ, 894 Ա. կարգի մարդիկներ եւ մօտ քսան հազար Բ. եւ Գ. կարգի մարդիկներ:

* * *

Ս. Միութեան սպարտակ խաղերուն Հայաստանի մարդիկները հաստատեցին մէկ Ս Միութեան մրցանիշ եւ 17 ազգային մրցանիշ, անոնք շահեցան հինգ առաջնութիւն (ոսկի մետալ) 9 երկրորդութիւն (արծաթ) եւ այդքան մըն ալ երրորդութիւն (պրոնզ):

* * *

Հայաստանի հնգամարտի (արդիական սիէնթաթլոն) խումբը շահեցաւ խմբային առաջնութիւն եւ ստացաւ խոշոր բաժակ մը:

* * *

Հայաստան այժմ ունի մէկ աշխարհի ախոյեան (Ա. Աղարեան) երկու Եւրոպայի ախոյեան (Աղարեան եւ Ենքիպարեան) երեք ողիմպիական ախոյեան (Աղարեան, Ենքիպարեան եւ Նովիկեան) մէկ համալսարանական միջազգային ախոյեան (Վ. Յովսէփեան) մէկ աշխարհի Գ. ախոյեան (Ն. Մուշեղեան) եւ բազմաթիւ Ս. Միութեան մրցանիշապահներ ու ախոյեաններ:

«ՆԱԻԱՍԱՐԴ»Ի ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Հայ Կեդրոնի մէջ Հսկոտեմբեր 23ին տեղի ունեցաւ «Նաւասարդ»ի հրատարակութեան շորորդ տարեդարձը: Այս առթիւ ներկայացուեցաւ Գրեմ Սիմոնի եւ Ե. Թոլոյեանի «Կըբբը Ակաւառ» բարոյալից եւ ծիծաղելի երեք արարոց գաւեշարը:

Բոլոր ղերակատարները, ղեկավարութեամբ «Նաւասարդ»ի ժրջան ատենապետ Կարօ Գալիկեանի, վարժ ու անբռնադատ խաղարկութեամբ մը երեւան եկան, սրահը բերնէ բերան լեցնող հոծ բազմութիւնը շուրջ երկու ժամ տեւաբար ուրախ ու զուարթ տրամադրութեան տակ պահելով:

Դերերը բաժնուած էին հետեւեալ ձեւով.— Խաչիկ աղա — վաճառական՝ Գր. Կարօ Գալիկեան, Թագուհի — Խաչիկ աղայի կինը՝ Տիկ. Ազնիւ Խտըրեան, Շուշան — Խաչիկ աղայի աղջիկը՝ Օր. Մեխնէ Նազարէթեան, Մեխնէ — Շուշանի ջոյրը՝ Օր. Էլտա Արզումանեան, Ազատ — Շուշանի նշանածը՝ Գր. Նշան Տէվէճեան, Կարպիս — Մեխնէի նշանածը՝ Գր. Վարդան Անդրէասեան, Երանոս — ձկնորս՝ Գր. Աստիկ Քէլէշեան, Ղուկաս աղբար — խոհարար՝ Գր. Մկրտիչ Սիվրիեան, Մարիամ — Սպասուհի՝ Օր. Գոհարիկ Քէօրողլանեան, այս տարի եւս յուշից Գր. Զաքար Ամասունի:

Ներկայացումէն յետոյ, ուրախ եւ հայկական ջերմ մթնոլորտի մը մէջ ընտանեկան պարահանդէսը շարունակուեցաւ մինչև առաւօտեան ժամը 4ը:

Գոհունակութեամբ կ'արձանագրենք, որ «Նաւասարդ»ի վարչութեան տարեկան ձեռնարկները գաղութի բոլոր խաւերուն կողմէ միշտ քաջալերանք կը գտնեն, որուն հետեւանքով բարոյապէս եւ նւթապէս արդիւնաւոր եղած են եւ կը հաւատանք, որ այսպէս ալ պիտի շարունակուին:

Հանդէսի բացումը կատարեց «Նաւասարդ»ի վարչութեան ատենադպիր Գր. Վահէ Պահատրեան, որ հետեւեալ յուզիչ եւ միաժամանակ յուսադրական հակապատկերներով ներկայացուց մեր իրականութիւնը եւ անոր մէջ գործող մեր Սիւթեան դերն ու գործունէութիւնը:—

Յարգելի Հայրենակիցներ,

Այսօրուան ներկայացում—պարահանդէսով կը նշենք Հայ Մարմնակրթութեան Ընդհանուր Միութեան Պաշտօնաթերթ «Նաւասարդ»ի, հրատարակութեան հինգերորդ տարուան սկիզբը:

«Նաւասարդ» պատմական սիրելի անուն մը, որ ինքնին թելադրիչ եւ յուզող է:

Արդարեւ, այս անունը նախ ոգեկոչուած է նախաքրիստոնէական պատմական այն շրջանին, երբ մեր ժողովուրդը կ'ապրէր իր քաղաքաւանդի մէջ, պիտոսկան ազատ կեանքով՝ իր հօր վեհապետներուն մականին տակ:

Ու ապա ոգեկոչումն է ժամանակակից այն շրջանին, երբ վերականգնումի աքաբուռով եւ յոյսով տողորուն սերունդ մը անդիմադրելի խոյանքով հրապարակ կը նետուէր, ստրկութեան արակ դարերով սուսալուող մեր ժողովուրդին ինքնավստահութիւն, կորով ներշնչելու եւ զայն դէպի նոր ու ազատ կեանք առաջնորդելու համար:

Իսկապէս, 1913ին, ազգային յոյսերու վերազարթնումի այդ օրերուն էր, որ մարմնակրթական շարժումը սկիզբ կ'առնէր Պոլսոյ մէջ, Նաւասարդի ու պիտի վերընձիւզումովը:

Աւա՛ղ, այդ գաղափարական, տեսլապաշտ սերունդը իր առաջին քայլե-

րուն իսկ նենգ ու բիրտ թշնամիին կողմէ ջախջախուեցաւ հայրենի ժողովուրդին հետ միասին, 1915ի ահաւոր եղեռնին:

Փլուզումի, յուսաբեկութեան ու աստապանքի օրերուն յաջորդեցին կըրկին յոյսի օրերը... Պատմական հայրենիքի հողին մէկ փոքրիկ մասին վրայ ծնունդ առաւ հայ պետականութիւնը, ու կ'անկեալուէք անոր ընդարձակուելն ու ամրապնդուելը:

Ահա այդ օրերուն է, որ նոր պոռթկումով մը կը վերածնի Հայ Մարմնակրթական (Ննդհանուր Միութիւնը, նախ իբր հակազդեցութիւն մը թուրքերոյ մեր ժողովուրդը երկրիս վրայէն ի սպառ վերցնելու դիւային ծրարին, եւ ապա ջարդերէն վերապրող որբերու եւ այրիներու բազմութեան փրկութեան գործին աստարելու ու նաեւ նորաստեղծ հայրենիքին վերականգնումի հերոսական աշխատանքին իրենց երիտասարդական խանդովն ու աւելնովը մասնակցելու համար:

«Նաւասարդ»ի ընթերցողները գիտեն որ, այդ սերունդը իրեն տրուած կարճ ժամանակաշրջանին մէջ ինչքա՛ն գնահատելի աշխատանքներ կատարեց եւ դեռ ինչքա՛ն իրականացումներու խանդն ու կամեցողութիւնը ունէր:

Մակին, կրկին յուսախաբութիւններ, դառնութիւններ ու... Արեւմտահայ աստապակոծ ժողովուրդին մնացորդացին հետ, Հ. Մ. Ը. Միութիւնը եւս դարձաւ աստանդական:

Այսպէս է որ երեսուն տարիներ առաջ, այս փերուն վրայ եւս ծիւ արձակեց Մարմնակրթական շարժումը Շաւարշ Գրիսեաններու բռնկուցած ջահը կրկին արծարծելու եւ տարաշէր բազմութիւններն ու հասնող նոր սերունդները անոնց գաղափարին շուշին տակ պահելու համար:

Մեր գաղութի Մարմնակրթական շարժումը տակաւ զարգացաւ ու կըրնանք անվարան ըսել որ ան գաղթահայ իրականութեան մէջ առաջին գծին վրայ կուգայ իր ընդարձակ մարդադաշտով — որմէ շատ մը գաղութներ զուրկ են — ու նաեւ պաշտօնաթերթ «Նաւասարդ»ով, որ ահա իր հինգերորդ տարելը ընդանը կը սկսի եւ որ Հ. Մ. Ը. Մ. ական միակ պարբերական է գաղութներու մէջ:

«Նաւասարդ»ի աւանդութիւններն ու գաղափարականը ուրեմն կուգան հին դարերէն եւ մեր խնկելի նահատակներէն, մեզի բերելով դարերու պատգամն ու նահատակներուն կտակը սրբազան:

Պաշտօնաթերթը ահա այդ պատգամն ու կտակը նորերուն փոխանցելու նուիրական պարտականութիւնը ստանձնած օրկան մըն է:

Ան լոյս կը տեսնէ խմբագրական մարմնին եւ թերթին վարչութեան միասնական ջանքերովը: Տարեկան նւթական բացը կը գոցուի «Նաւասարդ»ի բացառիկ ձեռնարկներովը — ներկայացում—պարահանդէսներ — որոնց աւանդական յաջողութեան համար ճիգ ու զոհողութիւն յինայեր մասնաւորապէս վարչութեանս եռանդուն ատենապետը:

Անհրժեշտ է աւելի հոգածութիւն եւ գուրգուրանք մեր թերթին հանդէպ բոլոր Հ. Մ. Ը. Մ. ականներուն եւ համակիրներուն կողմէ, որպէսզի թերթը դառնայ ինքնաբաւ ու հետզհետէ աւելի ու աւելի բազմակողմանի, հետաքրքրական եւ համայն սփռութի մարտական կեանքին հարազատ պատկերը ցորացնող երիտասարդին գաղափարական օրկան մը:

ԱՌՈՐԵԱՅ ՄԱՐԶԱՆՔԻՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Գրեց՝ ԵԱԻԱՐԸ ՔՐԻՍԵԱՆ

Ուեկ մարմնամարզական դրութեան մը օգտակարութեան ամենազլխաւոր պայտանը կանոնաւոր եւ յարատեւ կերպով աշխատիլն է :

Անշուշտ ռուէ դրութիւն մը ըսելով պէտք է հասկնալ մի միայն այն դրութիւնները, որոնք մարմնոյն ընդհանուր մասերուն կանոնաւոր եւ համաչափ զարգացում մը կ'ապահովեն, ու չեն սահմանափակուիր միայն այդ մարմնոյն մէկ մասը զարգացնելով :

Օրինակի համար, շատեր մարզանքի լաւ միջոց մը կ'ընդունին քաշելը, ասարակոյս չի կայ թէ քաշելը հիանալի ժամանց մը եւ մարզանքի լաւ միջոց մըն է, բայց առանձնապէս կատարեալ դրութիւն մը չի կրնար նկատուիլ :

Ուրեմն մարմնամարզական դրութիւն ըսելով պէտք է հասկնալ պարզ շարժումներէ բաղկացած փորձերու բաղադրութիւն մը, որ առանց ճիգի եւ աւելորդ յոգնութեանց մարմնոյն լիովին կ'ապահովէ պէտք եղած ուժը եւ առողջութիւնը :

Թիրեւ աւելորդ չլլայ ըսել թէ նոյնիսկ մարմնամարզական միութիւններուն շարաթը երկու կամ երեք տնդամ իրիկունները հաւաքաբար կատարած զանազան մարզանքները այնքան օգտակար չեն կրնար ըլլալ որքան առօրեայ կանոնաւոր մարզանքները: Բնականաբար շարաթը քանի մը անգամն ալ վերջապէս բան մըն է, բայց բաւական չէ, բաւականութիւնը առօրեայ կանոնաւոր մարզանքին մէջն է, ու պէտք է ամէն օր, հոգ չէ թէ առաւուս կամ երեկոյ, նոյն որոշեալ ժամերուն կանոնաւոր կերպով աշխատիլ :

Մասնաւոր առաւօտեան մարզանքները պէտք չէ շատ երկար եւ խիստ ըլլան. առաւօտները բաց պատուհանի մը դէմ տասնհինգէն տասնըութը վայրկեանի մարզանքը հետապնդուած նպատակին հասնելու միակ եւ ապահով միջոցն է. անշուշտ երբ մարզանքի կամ ննջասնեակի նպատուհանը բաց է, պէտք է ուշադրութիւն ընել օդի հոսանքներէ գերծ մնալուն :

Չանազան դրութիւններ կան որոնց մէկ մասին նպատակը մի միայն արտաքին խոշոր մկանները զարգացնելն է, դարձեալ կան ուրիշներ ալ, որոնք մարմնոյն արտաքին մկանները եւ ներքին գործարանները համաչափօրէն կը զարգացնեն, նախապատուութիւնը միշտ ներքին գործարանաց տալով, ու այս վերջիններուն կարգին կ'արժէ յիշատակել Դանիացի զինուորակ. տեղակալ Միլլըրի «Մօմ սիսթեմ»ը որ ոչ գործիք եւ ոչ ալ ռուէ երկրորդական ծախս կը պահանջէ :

Վերջացնելէ առաջ թերեւ օգտակար ըլլայ քանի մը խօսքով ընթերցողներուն ըսել թէ ե՞րբ է որ մարզանքը օգտակար կրնայ ըլլալ :

Նախ եթէ ձեր առողջութիւնը կը գնահատէք, պարտաւոր էք ամէն առաւուս ժամ մը կանուխ ելլելով ձեր մարզանքը կատարել եւ նախաճաշը հանդարտօրէն ընել, որովհետեւ մարզանքին, ինչպէս նաեւ ստամոքսին մէջ ամբարուած կերակուրներուն քանակը չէ որ ձեզի ուժ պիտի տայ, այլ կանոնաւոր եւ յարատեւօրէն կատարուած մարզանքը, եւ կերակուրներուն ալ լաւ ծամուելն է որ ձեզի աւուշ պիտի ընէ :

Ձեռնէ ռուէ մէկը կրնայ պարբերաբար զատ դրութեան մը հետեւիլ եւ դեռ չօգտուիլ, ասիկա անքնական չէ, որովհետեւ մարզանքին յարատեւութիւնն է գրեթէ միակ պայմանը այդ մարզանքին օգտակար ըլլալուն :

Հ.Մ.Ը.Մ.Ի ԹՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՅՕՐԳ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ

Երէկ, Կերակի, Յ Նոյեմբեր, Կաթողիկէ Հայոց Ճիշտի Հաստատութեան սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Թունաստանի շրջանի 30րդ Պատգամաւորական Ժողովը:

Կը մասնակցէին Թեազոնիկէի, Աթէնքի, Գոքիմիոյ, Ճիշտի, Կեսարիանիի, Կրեւէի, Սկսուտ Խնամակալութեան եւ Բնութենասէրներու պատգամաւորները՝ իրաւասու ձայնով, թիւով երեսուն:

Իբր ունկնդիր ներկայ էին Ազգ. Կեդր. Վարչութեան, Հ. Կ. Պաշի, Վեղա Օրձի, Հայրենակցական Միութեանց եւ այլ կազմակերպութեանց ներկայացուցիչները, ինչպէս նաեւ բազմաթիւ ազգայիններ:

Ժողովի նախագահ ընտրուեցաւ պ. Ժիրայր Կիւղէլեան, իսկ քարտուղար՝ պ. Կարօ Մինասեան:

Նըրայրական եւ Համերաշխ միջոցառման մը մէջ Ժողովը դրադեցաւ օրակարգի հարցերով:

Մասնաճիւղերը եւ Շրջ. Վարչութիւնը ներկայացուցին իրենց մէկ տարուան բարոյական ու նիւթական գործունէութեան հաշուառութիւնը, որմէ ի յայտ եկաւ որ անդնող տարեշրջանին Հ.Մ.Ը.Մ.Ի, հսկանակ մեր գաղութի սահմանափակ պայմաններուն, ունեցած է խիստ գնահատելի գործունէութիւն մը, վառ պահելով ազգային ոգին ու շունչը մեր երիտասարդութեան մէջ:

Ի յայտ եկաւ նաեւ որ ան մեր գաղութին մէջ կը հայուէ 500-550 անդամ - անդամուհիներ, որոնք իրենց կարելին ի գործ կը գնեն երեսասարգական այս կազմակերպութեան դօշը միշտ բարձր պահելու, յայտ օտաններուն, մարդադաշտերու վրայ, բարձրացնելով նաեւ մեր ժողովուրդին վարկը:

Իւրաքանչիւր մասնաճիւղ եւ Շրջ. Վարչութիւն, տեղական հասոյթներու ապահովումով, կրցած են մատակարարել իրենց նիւթական կարիքները, ինչ որ բարեհիշ կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.Ի համար:

Գործունէութեան դաշտը այնքան մեծ է այս կազմակերպութեան, որ եթէ նիւթական աւելի յայն միջոցներ արամագրութիւն անոր, կրնայ Հրաշքներ գործել մեր իրականութեան մէջ:

Օրակարգի նիւթերուն շուրջ եղան վիճարանութիւններ եւ թելադրանքներ՝ յառաջիկայ տարեշրջանի գործունէութեան մասին:

Ազգ. Կեդր. Վարչութեան անդամ Տաքթ. Արշակունի գնահատական խօսքերով ողջունեց Հ.Մ.Ը.Մ.Ի հայրենի գործունէութիւնը եւ վեր հանեց այն կարեւոր դերը, որ վերապահուած է այս կազմակերպութեան, մեր գաղութներուն մէջ:

Եւս-միջօրեայ ժամերուն, սրատգամաւորական ժողովը բուն ծափերով ողջունեց Ազգ. Կեդր. Վարչութեան աստեղագիտ՝ պ. Ներսէս Յակոբեանը:



Ամէն գրութիւն տեսակածորէն կատարեալ է, բայց եթէ զանազաններ նոյն մարդանքը եղածին պէս ի գործ կը գնեն, առանց իրենց անհատական պահանջները նկատի առնելու, շատ անդամ փոխանակ առաւելագոյն չափով ռաւուելու, ուրիշներու նման, կամ բնաւ չեն օգտուիր ու երբեմն ալ կը վնասուին, ու այս վերջին պարագային յանցանքը ապահովարար մարդանքինը չէ: Իականը ինքզինքը ճանչնալ, ատոր համաձայն եւ յարատեւօրէն աշխատելն է:

Պ. աստե՛նապետը քանի՛մը ժամ հետեւելէ յետոյ ժողովի բախատանքնե-
րուն, ջերմ եւ գնահատական խօսքերով ողջունեց երիտասարդական այս կազ-
մակերպութիւնը, որ մեր պապութիւն մէջ նախախնամական դեր կը կատարէ,
լը մեծ մասնակցութիւնը բերելով նանրային-հասարակական բոլոր շարժում-
ներուն: Պ. աստե՛նապետին խօսքերը ընմիջուեցան բուն ծափահարութիւննե-
րով:

Սրակարգի բոլոր հարցերը սպասելէ յետոյ, ժողովը միաձայնութեամբ,
տարուան մը համար վերընտրեց Ծրջ. Վարչութեան կազմը. որ պ. Պաարիկ
Սարգիսեան, Ստեփան Նշանեան, Դանիէլ Դանիէլեան, Աւետ Սաչատուր-
եան, Յարութիւն Ավազյան, Լեւոն Սաչատուրեան, Անգրանիկ Գոճայան
եւ Լ. Գայան:

Նախագահ պ: Ժիրայր Կիւղլեան, ժողովը փակելէ առաջ, հրաւիրեց
ներկաները, մէկ վաչրկեան յոտնկայս լուսթեամբ յարգելու յիշատակը
Աղբ. Կեղր. Վարչութեան հանդուցեալ աստե՛նապետ պ. Գրիգոր Բարազամ-
եանի, որ տնկեց՞ բարեկամն ու շատագոյ՞ր եղած էր Հ.Մ.Ը.Մ.ի ն: Ապա իր
չնորահալութիւնը յայտնեց Այգ. Կեղր. Վարչութեան, ճեղքաւ Օրջին, Հայ
Կաթողիկէ Առաջնորդարանին եւ այն բոլոր կազմակերպութեանց եւ միութեանց,
որոնք իրենց բարոյական եւ նիւթական սատարը կը բերեն՝ Հ.Մ.
Ը.Մ.ն բարգաւաճման եւ յառաջդիմութեան համար:

Ժողովը փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգով, որ երգուեցաւ յոտնկայս,
ներկաներու կողմէ:

Պատգ. ժողովի դիւանը առանձին զեկոյցով, հանրութեան պիտի ներ-
կայացնէ ժողովի աշխատանքներուն մանրամասնութիւնները:

Մինչ այդ, կը շնորհաւորենք Հ.Մ.Ը.Մ.ի Ծրջ. Վարչութիւնը եւ բոլոր
մասնաճիւղերու վարչական կազմերն ու անոնց անդամ-անդամուհիները եւ
կը մաղթենք ճորանոր յաջողութիւններ եւ նուաճումներ:

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Հ. Մ. Ը. Մ. Ի ՍԿԱՌԻՏԵՐՈՒ ԲԱԶՄԱԳՈՅՆ ՊԱՏԻ

Օ Ր Ա Ց Ո Յ Ց Ը

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐՈՎ ԶԱՐԴԱՐՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ԱՐԺԱՆԹԻՆԵԱՆ ՏՕՆԵՐՈՎ

ԻՒՐԱՔԱՆՁԻԻՐ ՀԱՅ ՏԱՆ ԶԱՐԻՔ ՊԻՏԻ ԿԱԶՄԵ

Փնտոնեցէք մեր բոլոր Յանճախումքերէն եւ տուէք Ձեր

առատ նուէրները, սկանուտական ձեռնարկներու

յաջողութեանց՝ ապահովման ի խնդիր:

«ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՈՒՄԻՒ ՀԱՄԵՐԳԸ

Խմբավար՝ ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Մեր Ժողովուրդին համար շիպ կրած շտուկեան արտադրութեանն ձեռքը, որ երգէն աւելի հարազատ եւ կրօնիչ լըայ իր սրտինն Անդրաշտ մեր խօսքը հայ երգի մասին է, Ժողովուրդէն տոնտաւտ եւ մշակուածն:

Այս համերգին առիթով տնկած մը եւս ամպագոյցն ունեցանք վերոյիշեալ նշմարութեան:

Մեծ թիւով ներկաները ոչ միայն խանդավառուած էին մեր երգերով, այլեւ եկած էին իրենց համակրանքը արտադրութեանը ղեկավարին:



Խմբավար մը, որ քսան՝ եւ ութը Երկար տարիներ նուիրուած է այս գործին, իր շուրջը համախմբելով վաթսուներկու արտադրութեան երկսեռ երաժշտասէրներ, ու կրցած է իր անձին կոտակել «Նորհիւ» իր քայքայիկ յատկութիւններուն, այսինքն՝ ողջախոսութիւն, ազդեցութիւն եւ փոխարեութիւն, յատկութիւններ, որոնք օրինակելի դարձած են իր շնորհիններունն Անոնք որոնք հանրային գործով զբաղած են, կրնան զնահատել որչ չկուտար նուիրումը, նկատի ունենալով այն բոլոր խոչընդոտները, որոնց պէտք է յալթահանել:

Միայն իր կոչումին գիտակից եւ դործին սիրահար մէկը կրնայ այս շափով նուիրուիլ: Մենք համոզուած ենք թէ Պր. Լեւոն Վարդապետեան այս աշխատանքը կը նկատել ոչ միայն իբրեւ արտադրութեան, այլ իր անձնական զբաղումէն յետոյ իր ստորեայ կեանքին մէկ մասը:

Յայտագիրը դադկացած էր 35 երգերէ, հայ զանազան ղեկնակներէ: Իրենց մասնակցութիւնը բերած էին՝ զաշնակահարուհի Օր. Ն. Կորկոսեան եւ ջութակահար Խ. Գալուստեան, որ արդէն ծանօթ է երաժշտասէր հասարակութեան: Խմբերգին զաշնակի ընկերակցութիւնը բերաւ Օր. Տ. Գարբիէլեան: Խմբերգը առաւ աւելին ինչ որ մենք կ'ըստպատէինք: Մեր նպատակը չէ մտնել զնահատի ուղիով՝ փնտել անպայման թերութիւններ եւ կամ՝ քաջակի արժէքներ:

Յայտնի է, որ խումբը կանոնադրուած է հետեւած է փորձերուն, ձայները՝ ճիշտ, իսկ մեներգոյնները յառ ընտրուած էին յանձինն օրինաւորուող Ա. Օրջանեան, Շ. Թովմասեան եւ Ա. Մաքսչեան, ընդ որն ալ օժտուած զգայուն եւ հասնելի ձայներով: Մեզի համար ուրախալի յայտնութիւն մը եղաւ Օր. Ն. Կորկոսեանի նուազամուծութիւնը: Առաջին անգամն է որ առիթը կ'ունենանք զինքը լսելու, որ կուգայ արդարացի եւ արժանիօրէն անկացնելու մեր զաղուծին լաւ զաշնակահարուհիներու քիչ թիւը: Պրտի շուրջինք իր յայտագրի իւրաքանչիւր կտորին անդադարաւս մանրամասնութեամբ: Բայց ընդհանուր առումով իր մէջ նշմարելիք ապագայ մեծ զաշնակահարուհի մը թոչոր յատկութիւնները: Որքան նրբութիւն եւ քնքուշութիւն տրաւ Գ. Ձիփօտարեանի «Գիշերային» մէջ, մեզի հաղորդակից ընկով կը զգացումներուն: Իսկ Ա. Խաչատուրեանի Թորատայով ի յայտ բերաւ ուժեղ եւ ինք

նախատակ քեզիք մը: Իմօցանք, որ այս շնորհալի օրհորդը մտադիր է լուրջ կերպով մշակել դաշնակի նուազածութիւնը: Այս առթիւ, պարտք կը համարենք յայտնել մէք մտածումները, որքան ալ անոնք նորութիւններ չըլլան: Արուստագէտը պէտք է գիտնայ թէ իր ընտրած ճամբան չափազանց փշուռ է եւ անորոշ ելքով:

Համբաւը եւ դնանատանքները չափազանց սուզ կը վճարուին: Ի նկատի պէտք է ունենալ, որ համբաւի արքանալը աւելի հեշտ է քան զայն իր բարձրութեան վրայ պահելը: Իսկական արուեստագէտը չի շլանար դնանատանքներէ եւ ո՛չ ալ կ'ընկճուի քննադատութիւնէ: Ան միայն կը մտահոգուի իր արուեստով եւ կատարելագործութեամբ, ըլլալով խոստապահանջ իր անձին հանդէպ եւ խելացի՝ ինքզինքը դատելու:

Գալով Օր.Տ. Գարբիէլեանի, մենք տեսանք իր մէջ սքանչելի դաշնակի ընկերակցող մը, որ ընդունակ է այս հիւղը կատարելագործելու, եթէ լըօրէն հետեւի:

Ինչպէս Հասարակութիւնը նոյնպէս եւ մենք չափազանց դժ. մնացինք խոմբէն, իր ստեղծած ջերմ խանդավառութեան համար: Սակայն թող թոյլ տրուի մեզի փոքրիկ գիտողութիւն մը ընելու՝ իրենց իսկ օգտին համար:

Նախ՝ բոլորն ալ պարտաւոր են երգերը գոց սորվիլ, որովհետեւ կարելի չէ ազատօրէն երգել՝ գլուխը կրծքին ծռած, եւ երկրորդ՝ կարելի չէ որչափքեր հետեւի խմբավարի նշաններուն:

Վերջացնելով մեր խօսքը, կը մտղթենք յարատեւութիւն եւ նոր յաջողութիւններ:

ՀԱՅԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՀԱՅ ՄԱՐԶԻԿԱՆԵՐԸ ԵՐԿՐԷ-ԵՐԿԻՐ

Միտիոյ մեր ճոր պաշտօնակից "Արեւելք Մարգաշխարհ"էն կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները—

Ի Ր Ա Ն

ՀԱՅ ՏԻՊԱՐ ՄԱՐԶԻԿԱՆԵՐ

Իրանի մէջ պարսկական լայն զանգուածներու կողմէ սիրուած մարդիկներ են Յակոբ եւ Լեւոն Քիւրճեան եղբայրները, որոնք առաջնակարգ գիրք մը կը գրուեն երկրին մարդկան կեանքին մէջ: Թեհրանի մեծագոյն օրաթերթերը յաճախ կը գրեն իրենց մասին, իբրեւ տիպար մարդիկներ: Իրենց փոքր եղբայրը, Անդրանիկը, իբրեւ առաջինը՝ Իրանի Սպայից Համալսարանին մէջ, ստացած է չքանչան եւ սուր՝ Ծահէն. երեք հարիւր ուսանողներէն լուազոյն նիշը ստացած է ան:

Քիւրճեան եղբայրները, որոնք բնիկ կարնեցի են, ախոյեան՝ ան ծանրութիւն վերցնելու: Լեւոն կը նկատուի ախոյեան՝ բոլոր առիտկան երկիրներուն, որովհետեւ անցեալ տարի մրցելով Հնդկաստանի մէջ, առաջնութիւն շահած է:

Երկու եղբայրներն ալ ազգային ընտիր զպացում եւ կրթութիւն ունին, ու կը մասնակցին «Արարատ» մշակութային միութեան, գործն. գեղարուեստութեամբ:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

ՆՅՐԸ ՌԻՂԻՈՎ

Վերջերս Ամերիկայի Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւնը իր ասրեկան ողիմպիական խաղերէն առաջ կազմակերպած է կրտսերներու ողիմպիական մը: Այդ ողիմպիականին գլխաւոր Հերոսը Հանդիսացած է փոքրիկն Վահան Խոյեան (Ուսթըրթառնէն): Վահան-ուրիշ մէկը չէ եթէ ոչ Հ.Մ.Ը.Մ.ի Հիմնադիրներէն եւ Գոլտոյ Ռոպէրթ Փոլէճի հետիկին նշանաւոր մարզիկներէն Տիգրան Խոյեանի գաւազը (այժմ քահանայ մեծագոյն Գոսթընի Առաքելական եկեղեցւոյ):

Վահան Խոյեան շահած է մէկ քալոս ոստումի, ինչպէս նաեւ 100 եւ 75 կարտ վազքի առաջնութիւնները:

ԵԳԻՊՏՈՍ

ԳՆԻԱՄՈՒՂԻ (ՊԻԱՐՏՈ) ՀԱՅ ՎԱՐՊԵՏՆԵՐ

Գնգամուղը կարելի է մարզական խաղերու մէջ դասել, մանաւանդ Հին մարզիկներ՝ երբ գաշտերէն քաշուին իրենց ասրիքին բերմամբ, կը սկսին Պոյո խաղին Հետեւիլ, որ թէ՛ մամանց եւ թէ՛ շարժում Ֆիզիքական եւ մտային զարգացման ազնոյ:

Վնգամի նախկին Փութպոլ խաղացողներէն Գեարոս Փումայեան եւ Բիզանդ ձմապաղեան անխոնջ Հետեւողներ կըսած են այս խաղին եւ միշտ նշխարատի մէջ դրուած են պատուարեր տեղեր:

Աղբաւանդրիայէն կը տեղեկացուի, որ Գեարոս Փումայեան Աղեքսանդրիոյ ախոյեանական մրցումներուն՝ դրուած է երկրորդ տեղը եւ նշխարատի ախոյեանական մրցումներուն՝ Հինդերորդ տեղը: Դժբախտաբար՝ Բիզանդ ձմապաղեան, որ նոյնքան լաւ խաղացող մըն է, անհանգստութեան պատճառով չէ կրցած մրցումներուն մասնակցիլ:

Կը շնորհաւորենք Վնգամի նախկին Փութպոլիտարէսը որ նոյնքան լաւ մարզիկ մը կը մնայ գնդամուկ սեղանին առջեւ, ինչպէս էր Փութպոլի դաշտին վրայ:

Երեկոյեան ժամաց Հինդին տեղի տեղեցաւ հանելի երեկոյթ յ՛ր, զոր վարեց տաննապետ եղբ. Գ. Սարգիսեան:

Հ.Մ.Ը.Մ.ի քալերէն վերջ, արատանցիկն քոյք Ա. Աւազեան եւ եղբ. Եարապիտանեան: Տրտառայէն Աթէնք գահուող սկուսա խմբապետ եղբ. Լեւոն Ստպանեան պատանց իր Հետիտան պատաններէն Հետաքրքրաշարժ զԸ՛՛՛ուպներ եւ ցոյց տուաւ իր պարելու կարողութիւնը:

Երջ, Վարչութեան կողմէ կըր. Գ. Սարգիսեան առաջին եւ երկրորդ Հանդիսացողներուն նախիբեց լուզորդական մեաաւնր եւ բրտակ մըն ալ դըրօշարչաւի յազթական Տիգրի խումբին:

Ամբողջ օրը Գերձ-Չաւէն նաապախումբը դանպան նուազներով եւ երպերով խառնազմանց բոլոր Հանդիսականները: Ենորհակալութեան խօսքեց միայն ըսինք անխոնջ եւ անձնուէր նաապախումբին:

Մութը կոխած էր արդէն՝ երբ բոլոր ներկաները մեկնումի պատրաստութիւններ տեսան, զեղիցիկ եւ հանելի օր մը վայելելէ յետոյ:

Ենորհակարութեան արժանի է նաեւ եղբ. Յ. Սվազեան որ Բնութեան սէրներու վարչութեան Հեա կարգադրած էր երթուգարձի մանրամասնութիւնները:

ՄԱՐՁԱՍԵՐ

Ս Կ Ա Ո Ւ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Գ Ի Տ Ն Ա Ն Ա Ս Ա Ր Բ Ա Ն Ն Դ Ր Օ Շ Ա Ն Ո Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

«Ներկորող Կարգ»ի պայմաններուն մէջ պահանջուած դրօշախօսութիւնը տպագրական գիտելիքն է այդ ճիւղին: Այսպէս, երբ սկսուտ մը կարող է հեռագրանիշի ձեւով հայերէն այբուբենը ամբողջութեամբ տալ, ան էր քննութիւնը անցուցած կը նկատուի:

Բայց դրօշախօսութիւն համար կան կարգ մը օրէնքներ եւ պահանջներ, որոնց հետամուտ սկսուտը պարտաւոր է տեղեակ ըլլալ եւ կատարել զանոնք: Այս պատճառաւ քննութեան մը միջոցին, մեքենարար հայ դերբու զանազան ձեւերը տալ հեռագրանիշ սխառէմով անբաւական պիտի նկատուի, հետեւապէս այս տարրական դրօշախօսութեան հետ անհրաժեշտ է գիտնալ նաեւ մատնանշուած պարզ օրէնքները:

«Առաջին Կարգ»ի սկսուտներու եւ «Ներկորող Կարգ»ի սկսուտներու պայմաններուն մէջ խիստ-մեծ նշանականութիւն կայ: Մինչ ներկորողին համար կը պահանջուին Խարբարական գիտելիքներ, որոնք ուշիմ սկսուտի մը համար չափազանց դիւրբժիւծելի են, ընդհակառակը «Առաջին Կարգ»ի սկսուտներու պայմանները աւելի յստալացեալ, աւելի խրթին եւ աւելի բարձր են: Այսպէս է դրօշախօսութեան պայմանը, որուն նորարական ծանօթութիւնը կարելի է գոհացուցիչ նկատել «Ներկորող Կարգ»ի համար, մինչդեռ «Առաջին Կարգ»ի համար սկսուտը պարտական է աւելի թանձրացեալ ձեւով մը ներկայացնել իր գիտցածը: «Հեռագրանիշի դրօշախօսութեամբ հազորդը եւ ընդունիլ ջրան բառն բաղկացած պատգամ մը եւ կամ պարզ հեռագրի ձեւով տասնըմեց բառ մէկ վայրկեանի մէջ» անչա պահանջը «Առաջին Կարգ»ի սկսուտի մը: այս գիտելիքը բաղդատելով «Ներկորող Կարգ»ի գիտելիքին հետ, կարելի է տեսնել մէկ ակնարկով՝ մէկուն պարզուկ հանգամանքը: Իսկ միւսին ալ գործնական եւ օգտակար երեւոյթը:

Այս ամբողջ տարբերութիւնը աչքի առաջ ունենալով, թիւ երեք գիտելիքին բացատրութիւնը կարելի եղածին չափ պիտի սահմանափակուի, աւելի պարզապէս այն մանրամասնութիւնները, որոնք ուղղակի կապ ունին, թիւ երեք քննութիւնը լրացնելու:

Իսկ աւելի ընդարձակ բացատրութիւն պիտի տրուի «Առաջին Կարգ»ի սկսուտի թիւ երեք պայմանին մէջ, որմէ մեծապէս պէտք է օգտուին նաեւ այն սկսուտները, որոնք նուազ մը կը հետեւին տարրական դրօշախօսութեան:

Սրեւելիքի մէջ մարդ քիչ անգամ առիթ կ'ունենայ հանդիպելու դրօշախօսներու եւ առիկա կը պատահի ծովեղջիկի տեղին, ուր եւրոպական նաւեր խարխիս կը ննտեն եւ որոնց նաւաղները պահանջէին համեմատ մէկ նաւէն միւսը լուրեր կը փոխանցեն: Այսպիսի առիթներու մէջ է միայն որ հայ պատանին ահանատես կ'ըլլայ դրօշախօսութեան եւ անոնց աչքին բաւական տարբերակ տեսարան մը կը հանդիսանայ, երբ առաջին առթիւ կը գիտեն երկու նաւաներ տարբեր նաւերու բարձունքը կեցած, փոքրիկ դրօշներ ձեռքերին, ամենատարբորինակ շարժումներով իրենց ձեռքերը հոս հոն կը ճօճեն՝ կարծես թէ աննպատակ: Բայց տարակոյն չկայ որ այդ շարժումները ոչ միայն անպատակ չեն, այլեւ այդ միջոցով անոնք ժամավաճառ չեն ըլլար մէկ նաւէն միւսը երթալով, ընդհակառակը անհաստատիօրէն քիչ ժամանակի մէջ անոնք իրարու կը հաղորդեն եւ կը ստանան զաղտնի կամ յայտնի

նի հրահանգներ: Եթէ տաճկական բանակի մէջ մուտ գործած ըլլար դրօշա-
խօսութեան դրու թիւը, մեր արարը հաւանաբար առիթը ունեցած պիտի ը-
լային զաղափար մը կազմելու անոր մասին:

Բայց ինչպէս ամէն յառաջդիմութիւն, այնպէս ալ այս շատ օգտակար
զիտելիքը, նոյնիսկ յօգուտ զինուորականութեան մուտ գործած չէ ճանկա-
տանի մէջ, հակառակ անոր որ ներկայիս օչ մէկ զինուորականութիւն կա-
տարեալ չէ՝ առանց իր դրօշախօս հետախոյզներուն: Դրօշախօսներու անհուն
ծառուղութիւնը պատերազմին մէջ սոյնչան ակնյայտի եղաւ որ, Անգլիոյ պա-
տերազմական նախարարը անպաղաց նամակներ կ'ուղղէր Անգլիոյ սկաուտ-
ներու հեղորհին, խնդրելով որ սկաուտները օգնեն զինուորական կազմակեր-
պութեան իրենց դրօշախօս սկաուտներով: Անգլիացի սկաուտները այժմ հը-
պարտութեամբ կը յայտարարեն թէ՛ իրենց հայրենասիրական գերագոյն
պայտարութիւնը թափած են հայրենիքին համար: Անտարակոյս իրաւունք ու-
նին անոնք ինքզինքնին հպարտ զգալու:

Դրօշախօսութիւնը զուգէ կեանքի պայազան ասպարէզներու մէջ իր մաս-
նաւոր նշանակութիւնը չունենալ, բայց մասնաւորապէս զինուորական կեան-
քի եւ ընդհանրապէս բացօթեայ կեանքի հետեւողներու համար ամենամեծ
օգտակարութիւններն ունի. այս նկատմամբ իր անհրաժեշտ գիտելիք մը,
սկաուտներու, համաց նպատակաւարմաց նկատուած եւ ներմուծուած է ծրա-
գրին մէջ:

Ամերիկեան կառավարութիւնը ամենամեծ թափով ոյժ կուտայ զինուո-
րական ճիւղի այս փազուկին, եւ այս մտօք հիմնած է Գանսսո նահանգին մէջ
դրօշախօսութեան դպրոց մը, որուն մէջ կ'աւանդուին գրօշախօսականութեան
թեան ամէն գիտելիքներ:

Վերջին համերոպական պատերազմը ցոյց տուաւ բանակներու այն գե-
րակշիւթիւնը, որ ձեռք բերուեցաւ հաղորդակցութեան միջոցներու անթե-
րի կիրարկութեան շնորհիւ: Այդ միջոցներու շարքին՝ դրօշախօսութիւնը եւ
նշանախօսութիւնը իրենց շատ նշանակալից դերը ունեցած են եւ արդարա-
ցուցած՝ այն ճիգերը՝ զորս ներկայ զինուորական իշխանութիւնները կը թա-
փեն՝ հասցնելու համար ուշիմ նշանախօսներ:

Բայց քանի որ աւելի ընդարձակ տեղեկութիւններ պիտի արուին «Առա-
ջին Կարգի» գիտելիքներու մէջ, մենք անցնինք ատարակցած դրօշախօսութեան
մեկնութեան:

ՀԵՌԱՎՐԱՆԻՇ ԿՐՕՇԱՆՍՈՍՈՒԹԻՒՆ

Դրօշախօսութեամբ զնադած ք հազարապարտութիւն կամ ունէ ըստ հա-
ղորդելու համար, երկու դրութիւն ընդամենաւ ֆ. մէկը հնարաքանիքի գրառու-
թիւն, իսկ միւսը հասարակ հեռագրի դրութիւնը: Հեռագրանիշ դրութեամբ
գրօշախօսութեամբ համար՝ ձեռքի կրկու դրօշակներ սահճածեւ պ են. մինչդեռ
երկրորդ դրութեան համար՝ մէկ դրօշ:

Քնդիտող Կարգի պահանջը պարզապէս պարբական գիտելիքը եղած ըլ-
լալուն, հոս ցանց պիտի ընենք բացատրութիւնը ալ Մօրսի դրութեան, որ
բոլոր բաւականի կը պարբերի հեռագրանիշ գրութեանէն եւ որ աւելի յարաւան-
եալ եւ կատարելագործուած գիտի է ճշգրիտ դրօշախօսութեան:

Հեռագրանիշի համար երկու գրօշակը պէտք են, որոնց մեծութիւնը պիտի
ըլլայ մէկուէն և բոլոր քաղաքներէ՝ բաժնուած երկու հապասար մասերու,
որուն վերի մասը պիտի ըլլայ կարմիր եւ վարի գաւը ճերմակ կերպանէ կամ
բուրգէ պար: Այս գրօշակը կը գործուին երկու դաք երկարութիւն ունեցող
ձողեղուս

Գրօշախօսութեան համար առնուողն երկու սկսուած անհրաժեշտ է. առաջինը գրօշներով հրամանը պիտի հազարգէ կամ շքանայնի եւ կամ ընդունի զիմացի գրօշախօսին պատասխանը, իսկ երկրորդը պիտի ճօթադրէ կամ հրահանգէ :

Բայց այս ձևը գրօշախօսութիւնը առ առաւելն մէկ քիւմեզը հետաւորութեան մը վրայ կրնայ գործադրուիլ. իսկ ասոնք հետոս գտնուող սկսուածի մը գրօշախօսութիւնը գրեթէ անտեսանելի է : Ուստի հետաւորութեան վրայ եղած գրօշախօսութեան մը համար անհրաժեշտ է երրորդ սկսուած մը եւս, որ պէտք է ունենայ հետադիտակ մը՝ ընդունելու համար հետաւոր կէտի մը վրայ դրստ հուող սկսուածին առեւած նշանները : Երբ գրօշախօսներու խմբակը երեք հոգիէ բաղկացած է եւ որոնցմէ մէկը հեղադիտակ ունեցող սկսուածն է, այդ պատգամային հաղորդագրութիւն մը տուած պահուն՝ ճօթադրող սկսուածը իւրաքանչիւր բառ յատկօրէն պիտի արտասանէ եւ շքանայն սկսուածը պիտի հազարգէ զանոնք : Իսկ հաղորդագրութիւն մը ընդունելու միջոցին սկսուածը հետադիտակով ուշադիր պիտի հետեւի հետուն գտնուող սկսուածին առեւած ումէն մէկ գիրին կամ բառին, եւ ճօթադրող սկսուածը անոնք անմիջական կերպով պարտի արձանագրել իր ճօթադրութեան մէջ :

Ամէն սկսուած պէտք է կանուխէն իմանայ թէ փոքր աշխատանքով եւ փոքր ճով մը հետադրանիչի ձեւով գրօշախօս մը կրնայ ըլլալ եւ ասիկա ասիթ պէտք է ըլլայ բոլոր սկսուածներուն համար՝ անմիջապէս սկսելու գրօշախօսութեան փորձերուն :

Ասորեւ տրուած հրահանգները պարտին ուշադրութեան առնուիլ նորեկ գրօշախօսներու կողմանէ, քանզի հետադրանիչ մը կարողացուելու ամենէն էական պայմանը՝ զայն ճշգրիտ կերպով հաղորդելն է :

ա) Յօտողը պէտք է ուղիղ կանգնի՝ դէմքը դէպի օտայողը դարձուցած եւ սրունքները իրարմէ քիչ մը բաց :

բ) Գրօշները պէտք է բազուկներուն ամբողջ երկայնքին վրայ պահուին, այնպէս որ դրօշ եւ բազուկ երկուքը մէկ ուղիղ գիծ մը շինեն : (Գրօշի ձողիկները թեւեցին մէջ չանցնել) :

գ) Բաղուկները դէպի ետ պէտք չէ տանիլ :

դ) Ուշադիր ըլլալու է սր բաղուկները ցոյց տան իւրաքանչիւր գրի համար անհրաժեշտ եղող ուղիղ գիրքերը : Ասիկա խիստ կարեւոր հրահանգ մըն է, քանզի անհնար կ'ըլլայ կարդալը՝ երբ անդոռչչ եւ կամ գէշ ձեւով մը կը հաղորդուին գիրքերը :

ե) Երկու գրօշներն ալ նոյն գոյները պէտք է կրեն եւ խօսող սկսուածը պարտի ուշադիր ըլլալ, որ իր կանգնած գիրքին ետեւը միօրինակ գոյն մը ըլլայ :

զ) Գիր մը արագ փոխանցելու նպատակաւ՝ պէտք չէ երբեք անոտողոր ձեւեր ընել :

է) Ընդունողին կարողութենէն աւելի արագ կերպով պէտք չէ գիր հաղորդել :

ը) Յօտողին ետեւի տեսարանին գոյնը միօրինակ եւ կարելի եղածին չափ ներհակ պէտք է ըլլայ նոյն սկսուածին համադրեալութիւն գոյնին հետ :

Սոյն հրահանգներուն հետ պէտք չէ միանգամայն մտքէ վրիպեցնել թէ՛ խօսիլը աւելի կարեւոր է քան ընդունիլը : Եւ այս է պատճառը որ մինչ ընտ գուելու վարք գրօշախօս մը կարելի է դառնալ մէկ քանի փորձերով, մինչդեռ լաւ խօսող մը ըլլալու համար բուսական աշխատանք կ'ուզէ եւ ճիշտ սկսուածը սխալ գրութեանը սկսի սարվիլ գրօշախօսութեան այրուբները, բանակարծի

դժուար պիտի ըլլայ այդ թերութիւնը սրբապետի ապագային :

Իւրաքանչիւր սկսուած պարտուոր է հայերէն այբուբենը հետադրանքի միջոցաւ ճիշտ եւ առանց տատամսելու, թէ՛ հաղորդել եւ թէ՛ ընդունիլ: Այբուբենին հետ մէկտեղ պէտք է թիւերու համապատասխան գիրերն ալ ճանշնալ, ինչպէս նաեւ այն գիրերը, որոնք փոխաբերաբար կը դործածուին մասնաւոր բառերու: օրինակ.— սիւսլ-գիր, պատրաստ եսայն :

Հետադրանքի միջոցաւ դրօշախօսութիւն սորվելու ամենադիւրին միջոցն է այբուբենը շրջանակներու միջոցաւ սորվել :

1 Երջամակ.— Ա. Բ. եւ Փ, Գ. եւ Ք Գ. եւ Թ. գիրերը եւ համապատասխան 1, 2, 3, եւ 4 թիւերը, կը կատարուին աջ ձեռքով՝ բոլորելով գրեթէ քառորդ շրջալիծ մը, որ կը վերջանայ ուլիլ գլխուն զազաթը: Զախ ձեռքը կը մնայ անշարժ եւ մարմնոյն հպած :

2. Երջամակ.— Ե. եւ Է. Զ. եւ . . գիրերը եւ համապատասխան 5, 6, եւ 7 թիւերը, կը կատարուին ձախ ձեռքով՝ բոլորելով գրեթէ ութերորդ շրջանակ մը, որ կը սկսի ուսէն շեղ գիծէ մը եւ կը վերջանայ ոտքերէն քիչ բարձր :

3 Երջամակ.— Ժ, Ի, Լ, եւ Ս, գիրերը եւ համապատասխան 8, 9 եւ 0 թիւերը.— կը կատարուին ձախ ձեռքով մարմնոյն աջ կողմին վրայ, բոլորելով գրեթէ մէկ քառորդ շրջանակ, որ կը սկսի աջ ուսէն ուղիւ գիծով մը եւ կը վերջանայ գլխուն զազաթը, աջ ձեռքը պահելով մարմինէն փոքր հեռաւորութեան մը վրայ :

4 Երջամակ.— Խ, եւ Դ, Մ, Լ. Զ, կը կատարուին ձախ ձեռքով՝ բոլորելով գրեթէ մէկ ութերորդ շրջանակ, որ կը սկսի ուսէն շեղ դիծէ մը եւ կը վերջանայ ոտքերէն քիչ վեր: Այս շրջանակը կը տարբերի 2. Երջամակէն անով՝ որ աջ ձեռքը պահուած կը մնայ ոտքերէն քիչ հեռու, մինչդեռ երկուրէն մէջ աջ ձեռքի բրօքր ոտքերուն դպած կը պահուի :

5 Երջամակ.— Հ, եւ Յ, Զ, եւ Յ, Ճ, Մ Կ. եւ Ն, կը կատարուին ձախ ձեռքով՝ բոլորելով գրեթէ երեք քառորդ շրջանակ մը, որ կը սկսի աջ ուսէն շեղ գիծէ մը եւ կը վերջանայ ձախ ոտքին մօտ: Այս շրջանակը բոլորելու պահուէն՝ աջ ձեռքը ուսին հաւասար ուղիւ գիծի մը վրայ կը պահուի :

6 Երջամակ.— Ծ, Ո, Գ, եւ Զ ինչպէս նաեւ Պ. գիրը ինչ որ կը ներկայացնէ եւ յիսլ, կը կատարուի ձախ ձեռքով՝ բոլորելով գրեթէ մէկ քառորդ շրջանակ, որ կը սկսի գլխուն զազաթէն եւ կը վերջանայ ձախ ոտքէն քիչ բարձր, աջ ձեռքը պահելով ուսէն քիչ վեր, շեղ անկիւնի մը վրայ :

7 Երջամակ.— Բ, եւ Բ, Ս, որ կը ներկայացնէ եւ զիբ Վ, կը կատարուին ձախ ձեռքով՝ բոլորելով մէկ քառորդ շրջանակ, որ կը սկսի ձախ ուսէն վեր շեղ անկիւնի մը եւ կը վերջանայ ձախ ոտքէն քիչ բարձր, աջ ձեռքը պահած գլխուն զազաթին վրայ :

Մտայնալը . . . Տ, Ի, եւ Ծ, գիրերը կը ներկայացուին հետեւեալ եղանակով.— Տ) երկու գրօշներն ալ դէպի ձախ ուղղուած, ձախ ձեռքը ուսին հետ մէկ ուղիւ գիծի վրայ, իսկ աջ ուսէն քիչ վեր շեղ անկիւնի մը վրայ պահուած: Իւ) Նոյն ձեռք ինչպէս (Տ), միայն աջ ձեռքը վար, ձախ ոտքին մօտ եւ ձախն ալ կտոր մը վեր առնուած: Ծ) Նոյնը ինչպէս (Իւ) միայն ձախը վար, ոտքին մօտ, իսկ աջն ալ ձախ ուսէն քիչ վար, սուր անկիւն մը կազմելով միւս ձեռքին հետ :

Թիւի.— Կը սրուի ամբողջ շրջանակ մը կատարելով աջ ձեռքով, մինչ ձախը անշարժ ոտքերուն փակած կը պահուի (Պատրաստ): Կը դուրս ուղիւ կանգնած վիճակով, ոտքերը մէկ թիւ բաց, դէմքը ճիշտ դիմացի ընդունողին դարձած եւ երկու գրօշները խաչածու ոտքերուն վրայ փակած :

Սկսուած մը «Երկրորդ Կարգ»ի դրօշախօսութեան քննութիւնը անցնելու համար, պարտաւոր է քառասուն գիր տալ, որոնց մէջ երկու գիրէն աւելի որսալ պէտք չէ գտնուի: Քննութեան պահուն խմբապետը պէտք է սկսուտէն պահանջէ նաեւ դրօշախօսութեան վանազան կանոնները, որոնք արդէն յիշուած են հոս:

Դրօշախօսութեան իւ նշանախօսութեան աւելի յառաջացեալ դասընթացքի համար պէտք է կարդալ «Ա. Կարգ»ի թիւ երեք պայմանը:

Մէկ մղոն ճամբայ կտրել 12 վայրկեանի մէջ՝ սկսուտի գնացքով (50 քայլ վաղք, 50 քայլ պարզ քալել, փոխն ի փոխ):

«Երկրորդ Կարգ»ի պայմաններուն մէջ գրեթէ ամենէն դիւրինն է՝ թիւ շորս դիտելիքը, քանզի չկայ սկսուած մը՝ որ ամենայն հեշտութեամբ, մէկ մղոն ճամբան տասերկու վայրկեանի մէջ շկտրէ: Բայց հոս խմբապետներու եւ քննիչներու մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրեմ սոյն պայմանին ճշդրիտ իմաստին վրայ, որ կը պահանջէ՝ մէկ մղոն ճամբան երթալ ճիշտ 16 վայրկեանէն, ոչ նուազ եւ ոչ ալ աւելի:

Երկու նպատակի կը ծառայէ սկսուտի վաղքը. ա) իրր ժամաչափ, բ) իրր հեռաւորութիւն չափող: Այսպէս երբ կանոնաւոր սկսուտի գնացք կը պահուի, կարելի է ենթադրել, թէ տասերկու վայրկեանի ժամանակ մը անցած է, եւ թէ սկզբնական կայանէն մինչեւ ներկայ գտնուող կէտը՝ մէկ մղոնին հեռաւորութիւն մըն է: Այս ուղիղ եզրակացութեան հասնելու համար անհրաժեշտ է որ սկսուտները մասնաւոր խնամք տանին իրենց սկսուտական վաղքը կանոնաւորուելու եւ միօրինակ չափի մը հասցնելու, որ է ճիշտ տասերկու վայրկեանի մէջ հասնիլ մէկ մղոն հեռու կէտի մը:

Ամէն սկսուած պէտք է իր ոտքի քայլերուն մեծութեան չափը գիտնայ եւ տարիկա իր նօթատետրին մէջ նշանակէ. ասիկա ընելու համար անհրաժեշտ է շատ մը անդամներ որոշ հեռաւորութեան մը, օրինակ հարիւր ոտք, քայլել եւ համրել քայլերը: Եթէ այս քայլերուն թիւը 52,8ով բազմապատկէք կը ստանաք մէկ մղոն:

Սկսուտի գնացքը իր շատ մը առաւելութիւններուն հետ պատեհութիւնը կուտայ մեծ հեռաւորութեամբ ճամբայ կտրել, առանց ուժասպառ ըլլալու:

Սկսուտներու համար ամենահասարակ բանը վաղելն է, բայց պէտք է շեշտեմ՝ թէ վաղքերու մէջ իսկ տարբերութիւն կայ: Վաղել կայ ուր սկսուտին կուրծքը՝ առաջ, գլուխը ուղիղ, թեւերը քովքնտի ազատօրէն մէկ առաջ մէկ ետ կը ճօճեն եւ քայլերը համարձակ առաջ կը տարուին: Ասիկա ուղիղ հղանակն է վաղելու եւ յանձնարարելի՝ բոլորին: Մինչդեռ կայ նաեւ վաղելու եղանակ մը, ուր գլուխը կախ, կանակը ծուռ, ձեռքերը ամբողջութեամբ քովէն կախուած եւ քայլերը ոչ-միօրինակ վեր վար կը տարուին: Ասիկա որսալ ձեւն է վաղելու, որ զիրար կը յողնեցնէ եւ մարմնի բարեձեւութիւնը կը խանգարէ:

Մեծ հետաքրքրութեամբ հետեւած եմ տղայոց վաղելու ձեւերուն եւ այն եզրակացութեան հասած՝ թէ ա՛յն տղաքը լաւ մարզիկներ կը դառնան, որոնք վաղելու տիպար ձեւը ունին:

Նիւ Եոթ

ՄԿԲՏԻՉ ԵԱՆՐԳԵԱՆ

Պ Ո Լ Ի Վ Ի Ա

(ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

Գրեծ՝ ՄՈՎՍԷՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

Դարեր առաջ, սղանիական առաջին զաղթականութեան շրջանին, Պոլիվիա անունով Լրկիր մը գոյութիւն չունէր: Մինչեւ Արժանթինի Հիւսիսային սահմանները, Սուխույի շրջանն ալ մէջ ըլլալով, կը կոչուէին բարձրագոյն կամ ստորին Բիրերու եւ կը պատկանէին Ինգայական կայսրութեան, մայրաքաղաք ունենալով Կուզկու: Այդ կայսրութիւնը կարելի է համարել նախապետական շրջան: Ամբողջ Հարաւային Ամերիկայի մէջ, Մեքսիկոյէն յետոյ, Պերուն կը համարուէր ամենէն քաղաքակիրթ եւ զարգացած երկրամասը: Արդի հնախուզական պեղումները ցոյց կուտան Պերու ժողովուրդին եւ անոր հին կայսրութեան աննախընթաց ծաղկումն ու զարգացումը:

Հարաւային Ամերիկայի աղատադրական պատերազմներու ժամանակ իսկ, Պոլիվիայի սահմանները անորոշ էին եւ այդ անունով երկիրմը դեռ ճանչցուած չէր: Ուստի, Արժանթինի Հիւսիսային մասերուն մէջ աղատագրական պատերազմ մը աղ զօրավար Մանուէլ Պելկրանօ գրաւեց այժմեան Պոլիվիայի Թարիխա քաղաքը եւ զայն միացուց Արժանթինի, որ ետքէն վերադարձուեցաւ եղբայրական Հանրապետութեան, խաղաղ միջոցով:

Այս շրջանին զօրավար Պելկրանօ իր ազգային կառավարութեան կողմէ հանգստեան կոչուելով, ստացաւ 40.000 փետոյի գումար մը իբրեւ նուէր: Սակայն Հայրենասէր զօրավարը այդ գումարով երեք դպրոցներ հիմնեց իր դրուած երկիրներուն մէջ:— Սալթա, Սուխույ եւ Թարիխա, որոնք ցարդ գոյութիւն ունին, ծաղկեալ վիճակով եւ կը կոչուին բարեբարին անունով:

Պակաս չէին նաեւ ուրիշ Հայրենասէր եւ մարդասէր զօրավարներ, որոնց մէջ նշանաւոր Պոլիվարը մինչեւ վերջ պատերազմեցաւ եւ ձեռք բերաւ այդ ընդարձակ երկիրներու կառարեալ ազատութիւնը: Ի պատիւ իրեն, ազատագրուած Հողամասերէն մէկը իր անունով կոչուեցաւ Պոլիվիա, որ արդի Պոլիվիական Հանրապետութիւնն է իր որոշ սահմաններով եւ ազգային անկախ կեանքով:

Միշտ համեմատութիւնները պահելով ցոյց տուինք թէ՛ այս երկիրը դեռ չէ կրցած օգտուել քաղաքակրթութեան բարիքներէն, մասամբ կղզիացած ըլլալուն եւ մասամբ ալ անհոգութեան պատճառով: Սակայն կարելի չէ ժխտել, որ Պոլիվիան սկսած է վերազարթնել: Մանաւանդ կրթական դործը լաւ հիմերու վրայ դրուած է: Կառավարութիւնը, պետական միջոցներով, երկիրը ցանցած է տարրական դպրոցներով, նախապէս անպրագիտութիւնը բառնալով: Համար: Դասաւանդութիւնը կը տեւէ օրական ուղիղ ութը ժամ, կէսօրէն առաջ եւ անկէ ետք: Աշակերտութիւնը խառն չէ: Տղայոց եւ աղջկանց դպրոցները բոլորովին անկատ են, աշխարհիկ ծրագրով: Կրօնի ուսուցումը տեղի կ'ունենայ միայն եկեղեցիներու մէջ:

Հարաւային Ամերիկայի անկախութեան տարիներուն Պոլիվիան առաջինը եղած է որ հիմնած է համայնարան Սուզրէ քաղաքին մէջ: Ժամանակ մը դժբաղի հանրապետութեանց ուսանողութիւնը կը դիմէր Սուզրէ իր բարձրագոյն կրթութիւնը ստանալու համար:

Ընթերցողաց յիշողութիւնը թարմացնելու համար նորէն կրկնենք, որ Պոլիվիան բնական հարստութեան եւ երկրագործական արտադրութեան անսպառ շտեմարան մըն է: Եթէ քաղաքակրթական հով մը անցնի այս երկրէն եւ հողը մշակուի արդիական միջոցներով, կարելի է վստահօրէն պնդել,

որ ան կը դառնայ Հարաւային, Ամերիկայի ամենէն բարգաւաճ երկիրներէն մէկը: Իր աշխարհագրական դիրքը, բերրի հողը եւ երեք տարբեր կլիմաներու առաւելութիւնը երկրին կը խոստանան մեծ ապագայ:

Փոքրգիւղերը ղեռ, վարժ չէ աշխատանքի, կը բաւականանայ միայն բնական բարիքներով: Հողը արգաւանդ է ամէն տեսակ արմտիքի, մասնաւորապէս ցորենի եւ եգիպտացորենի համար: Ունի ընդարձակ եւ անմշակ տարածութիւններ թէյի, ինչուսի եւ շատ անտառներ բուսեցնի (ռետին): Այս հում նիւթը, մանուսնոց, արդի գործածութեան համար անգնահատելի հարուստութիւն մըն է, որմէ չեն օգտուիր նոյնիսկ իրենց սեփական գործածութեան համար: Որտառտա երկիր է նաեւ: Անտառները լի են վայրի կենդանիներով եւ այծեամենբով:

Մինչ Արժանիքի սահմաններէն ներս, պետական օրէնքով, խիստ արգիւտած է այս կենդանիներու ոչնչացումը, այն ինչ Պոլիվիայի մէջ կան չարաչաճ ընկերութիւններ եւ խմբակցութիւններ, որոնք անխնայ կը սպաննեն եւ կ'ոչնչացնեն այս կենդանիները, որոնց կաշին եւ բուրդը շուկայ կը հանեն առասպելական գներով: Օրինակ, Ալբակա կոչուած այծը, որ ջամայի սպիրտակ տեսակն է, շատ յարդի է իր մորթով եւ բուրդով: Նոյնքան յարդի է նաեւ միկունա կոչուած ուրմէ ընտիր մուշտակներ եւ բրդեայ վերմակներ կը պատրաստեն: Վիկունայի բուրդէ վերմակ մը, Պոլիվիայի մէջ, արժէ մօտ քսոսասուն փեսօ, մինչ Արժանիքի մէջ հաղիւ կարելի է ձեռք բերել քանի մը հարիւր փեսոյով:

